Հաստատում եմ՝
«Աբովյանի պետական
էներգետիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի
տնօրեն _____ Գ.Մեհրաբյան

«ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐԳ

2022թ

ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1.1 Որակի ապահովումը Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) ռազմավարական կարևորագույն նպատակներից է: Որակի ապահովման գործընթացում պետք է ընդգրկվեն կրթության բոլոր շահակիցները՝ինչպես արտաքին,այնպես էլ ներքին:՝

1.2 Ներքին շահակիցներն են՝ Քոլեջի աշխատակիցները և ուսանողները:Արտաքին շահակիցներն են՝ պետությունը, գործատուները,շրջանավարտները և շահագռգիռ այլ կողմեր:

1.3 Քոլեջը նպատակ ունի արտաքին և ներքին շահակիցների հետ կապերը խորացնել նպաստելով Քոլեջի ռազմավարության իրականացմանը:Արտաքին և ներքին շահակիցների հետ սերտ համագործակցությունը հնարավորություն կտա բարելավել կրթական ծառայությունների որակը:

1.4 Որակի ապահովման գորընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգրավման ժամանակ Քոլեջը հաշվի է առնում այն հանգամանքը,որ արտաքին միջավայրի վերափոխման արդյունքում փոփոխվում են նաև շահակիցների՝ միջին մասնագիտական կրթությանը ներկայացվող պահանջները:

2.ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2.1 Ներքին և արտաքին շահակիցների ներգրավման քաղաքականությունը սահմանում է այն հիմնական սկզբունքները, մոտեցումները և ձևերը,որոնցով Քոլեջը առաջնորդվում է շահակիցների ներգրավման և նրանց կարիքների բացահայտման գործընթացում:Այս քաղաքականությամբ առաջնորդվելիս Քոլեջը ձգտում է շահակիցների ներգրավման միջոցով բարելավել կրթական ծառայությունների որակը:

3.ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3.1Քոլեջի որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավման նպատակն է որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետ գործարկումը, քոլեջում տեղի ունեցող բոլոր գործընթացների շարունակական բարելավումը և որակի մշակույթի ձևավորմունը:

3.2 Որակի ապահովման գործընթացներում շահակիցների ներգրավումը ենթադրում է որակի ներքին ապահովման բոլոր փուլերում նրանց մասնակցությունը, այն է՝ պլանավորում և փաստաթղթավորում, այնպես էլ իրականացում, գնահատում և բարելավում:

3.3 Որակի ապահովման գործընթացներում շահակիցների ներգրավման ենթանպատակներն են՝

1.մասնագիտության կրթական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և վերանայման գործընթացներում շահակիցների մասնակցության ապահովում.

2. կրթական ծառայությունների որակի բարելավում.

3. մասնագիտությունների նոր ուղղությունների զարգացում.

4. կրթության ոլորտում գործող լավագույն փորձի ներդրում քոլեջում.

5. մրցունակ շրջանավարտների թվի բարձրացում.

6.շահակիցների կարիքների վերհանում , քոլեջի գործունեության բարելավում.

7. ֆինանսավորման աղբյուրների ավելացում:

3.4 Շահակիցների ներգրավվածության ապահովման գործում կառուցակարգերի առկայությունը քոլեջի կառավարման համակարգի կատարելագործման կարևորագույն և անհրաժեշտ հիմքերից է:

3.5 Հետադարձ կապն այս գործընթացում ապահովում է բոլոր շահակիցների և ներգրավված կողմերի հետ փոխազդեցության մեխանիզմը:

4.ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4.Ապահովել Քոլեջում հասանելիության, հաշվետվողականության և թափանցելիության մեխանիզմները ,որն էլ կապահովի որակի ապահովման գործընթացում արտաքին և ներքին շահակիցների ներգրավմանը:

5.ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

5.1 Քոլեջի ներքին շահակիցներն են՝ ուսանողները, դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը:

5.2 Որակի ապահովման գործընթացում Քոլեջը կարևորում է ներքին շահակիցների ներգրավումը կրթական ծառայությունների որակի անընդհատ բարելավման և որակի մշակույթի ձևավորման նպատակով:

5.3 Ուսանողների որակի ապահովման գործընթացում ներգրավման եղանակներն են՝

5.3.1.ներգրավումը կրթական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և վերանայման գործընթացում.

5.3.2.ուսումնառության և դասավանդման վերաբերյալ պարբերաբար հարցումների անցկացումը.

5.3.3.ներգրավումը որակի ապահովման աշխատանքային խմբում,որի ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է համապատասխան փաստաթղթերով.

5.3.4.ինքնավերլուծության գործընթացում ուսանողների պարտադիր մասնակցությունը.

5.3.5.քոլեջի վարչական անձնակազմի հետ պարբերաբար հանդիպումներին մասնակցությունը:

5.4.Քոլեջի դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի ներգրավումը որակի ապահովման գործընթացում իրականացվում է հետևյալ եղանակներով՝

5.4.1.ներգրավումը մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացում.

5.4.2.քոլեջի գործունեության արդյունքների վերաբերյալ պարբերաբար հարցումների անցկացումը.

5.4.3.ներգրավումը քոլեջի որակի ապահովման աշխատանքային խմբում, այլ աշխատանքային խմբերում և հանձնաժողովներում.

5.4.5.ինքնավերլուծության գործընթացում մասնակցությունը.

5.4.6.ղեկավար մարմինների հետ պարբերաբար հանդիպորմների հետ մասնակցությունը:

6.ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

6.1 Քոլեջը կարևորում է արտաքին շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացում:

6.2 Արտաքին շահակիցներն են՝ պետությունը, շրջանավարտները, գործատուները, դիմորդները, գործընկերները:

6.3 Որակի ապահովման գործընթացում արտաքին շահակիցների ներգրավման եղանակներն են՝

6.3.1.ներգրավումը մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և վերանայման գործընթացում ,հարցումների և հանդիպումների և այլ ձևերով.

6.3.2.շրջանավարտների ավարտական ամփոփիչ ատեստավորման (պետական քննություններին) հանձնաժողովներում մասնակցությունը.

6.3.3.համատեղ իրականացվող ծրագրերում, հետազոտական և այլ աշխատանքներում ներգրավումը.

6.3.4.հմտության, փորձառության վերապատրաստումների անցկացումը: